600.0464.11.12.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2019 թվականի №464Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №621Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի դեկտեմբերի 28-ի №621Ա որոշմամբ «ԷԴԱ ԸՆԴ ԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0971 թույլտվությունները (այսուհետ՝ թույլտվություն),

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 17.1 հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և դրանք ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №345Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 341 775 (երեք հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, և այդ գումարի փոխանցումը փաստացի կատարվել է,

դ) Ընկերությունը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մարտի 17-ի №ԿԴ1/0262/04/16 վճռով սնանկ է ճանաչվել,

ե) Ընկերությունը 2019 թվականի նոյեմբերի 25-ին գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

զ) Ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը մինչև 2019 թվականի նոյեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածի համար կազմել է 329 891 (երեք հարյուր քսանինը հազար ութ հարյուր իննսունմեկ) դրամ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Մնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի «ԷԴԱ ԸՆԴ ԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №621Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2019 թվականի նոյեմբերի 25-ը հաշվարկված պարտքը կազմում է 329 891 (երեք հարյուր քսանինը հազար ութ հարյուր իննսունմեկ) դրամ:
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
11 դեկտեմբերի 2019թ.